Ավետիք Իսահակյան

Մենակ մանկության օրերն են անո՛ւշ

Մենակ մանկության օրերն են անո՛ւշ,
Գողտրիկ ու բուրյան, չքնա՛ղ ոսկեփայլ.
Եվ այնուհետև մեր կյանքը անհույս
Գահավիժում է անդունդը մըռայլ;

Ու մեկիկ – մեկիկ մեր կյանքի ծառից
Եվ վայր են ընկնում, քըշվում հողմավար
Մեր լավ տենչերը, սերը ծաղկալից,
Վառ համբույրների գարունը պայծառ:

Եվ ո՞վ սիրտ ունի մերկ ծառի նըման՝
Կանգնել աշխարհի հողմերին պատվար –
Կյանքի ձանձրույթին, ծաղրանքին մարդկան,
Իշխող բըռունցքին՝ չոր հացի համար …

Ավա՜ղ, լուսնի տակ և վեհ բան չըկա,
Ամեն ինչ կոպիտ, բիրտ անասնական.
Աննյութ, անմարմին, անկիրք սեր չըկա,
Ա՜խ, մաքուր սերը երազ է միայն:

Ես շա՜տ եմ լացել սուրբ սիրու համար
Եվ ես լավ գիտեմ գինը ամենքի –
Սերն է անկումը մեր աստվածության,
Շըրջմոլիկ հուրը կրքերի ճահճի:

Եվ ո՞վ կարող է օտարին սիրել
Կամ մերձավորին՝ անհուն, անսահման.
Ուրիշին սիրել իրենից ավել.
Ընկերին սիրել – պատրանք է միայն:

Եվ ո՞վ կարող է ուրիշին ըզգալ,
Որպես իր եսը, հասկանալ նրան.
Ա՜խ, մենք ապրում ենք անծանոթ իրար,
Օտա՜ր ու հեռո՜ւ՝ աստղերի նման:

Բայց բյուր երանի, ով երազ ունի
Իր հոգու անհուն սրբության խորքում.-
Մի շքեղ երազ, որով նա կապրի
Աշխարհից հեռո՜ւ, բյուրեղ բարձունքում:

1903
Ալեքսանդրապոլ